## ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Փորձարարական դպրոցներին տրված է արտոնագրյալ ազատություն և նրանք պետք է կրթական նորարարության մոդել հանդիսանան: Ինչպես նաև, նրանք կոչված են ծառայել որպես քաղաքային հասարակական արդյունավետ դպրոցների հետազոտության և զարգացման վայր: Փորձարարական դպրոցները առավելագույնս վերահսկում են հետևյալ հարցերը՝

- Աշխատակիցների ընտրություն
- Բյուջեի վերահսկում
- Անկախություն կենտրոնական գրասենյակի ուսումնական ծրագրից . Բովանդակության ընտրությունը, ուսուցման և գնահատման մեթոդների ճկուն համակարգը, առաջադիմության և ավարտական պահանջները ուսուցիչների ընտրման առարկան են
- Մասնագիտական զարգացում
- Կառավարում
- Աշակերտների և աշխատակազմի ուսումնական օրվա և տարվա տևողության նշանակման ազատություն

Ի հավելումն, Փորձարարական Դպրոցների ուսուցիչները ամեն տարի աշխատանքի են ընդունում և գնահատում են դպրոցի տնօրենին, և ցանկության դեպքում յուրաքանչյուր տարվա վերջում կարող են փոխադրվել:

*Ներկա հաջողված ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ օրինակներ:*
*Բելմոնտի տարածքի ԼԱ Արվեստների Դպրոցը և Կառավարման Սիվիտաս դպրոցը Ռոյբալ ուսումնական կոմպլեքսի տարածքում*



## ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՐՏՈՆԱԳՐՅԱԼՆԵՐ

Հաստատված արտոնագրյալ դպրոցները ունեն նույն ուսումնական ազատությունը ինչ որ անկախ արտոնագրվածները, սակայն նրանք օգտվում են ԼԱՄՈՒ (UTLA) անդամների համար նախատեսված բոլոր առավելություններից և արտոնություններից: Նրանք անցնում են նույն մանրամասն հաստատման գործընթացը, ինչպես որ մնացած բոլոր անկախ արտոնագրյալները: Անկախ արտոնագրյալների նման, Հաստատված Արտոնագրյալները ունեն ուսումնական ծրագրի, մասնագիտական զարգացման, բյուջեյի և այլ կրթական խնդիրների լիարժեք ազատություն: Նրանք կարող են անգամ «մասնավոր գործընկերներ» ունենալ, ինչպես օրինակ համալսարաններ և ձեռնարկություններ:

Նշանակալից տարբերությունը, այնուամենայնիվ այն է, որ Հաստատված Արտոնագրյալների աշխատակիցները մնում են ԼԱՄՈՒ անդամներ: Այսպիսով, ի տարբերություն անկախ արտոնագրյալների ուսուցիչների, նրանք պահպանում են ամբողջ աշխատավարձը, առողջապահական և թոշակառության արտոնությունները, ինչպես ԼԱՄՈՒ այլ վկայագրված աշխատակիցները:

*Ներկա հաջողված ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՐՏՈՆԱԳՐՅԱԼՆԵՐԻ օրինակներ.*
*Վեսթվուդի Տարրական Դպրոց, Փոլ Ռեվեր միջնակարգ դպրոց, Մագնետ բաց արտոնագիր*


ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՑՅԱԼ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
**Կրթության և Առաջնորդման Մեկ Քառորդ Դար**

3303 Wilshire Blvd., Tenth Floor,
Los Angeles CA 90010
(213) 487-5560 or (800) 556-UTLA


# ԼԱՄՈՒ և ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ




## ՈՒՐ ՍԿՍՎՈՒՄ Է ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Լոս Անջելեսի Միացյալ Ուսուցիչներ

ԼԱՄՈՒ միշտ եղել է դպրոցի բարելավման առաջնամասում հիմնվելով ուսուցիչների , ծնողների և այլ շահագրգիռ անձանց խրախուսման վրա: Ավելի քան երբևէ, միասնական բարեփոխումը շտապ անհրաժեշտություն է, հատկապես այժմ՝ երբ ԼԱՄՈՒ դպրոցական խորհուրդը հնարավորություն է տալիս արտաքին օպերատորներին վարել նոր և PI 3+ դպրոցներ: Մինչ ԼԱՄՈՒ շատ դպրոցներ աճ են ցույց տվել, դրանց մյուս մասը օգնության կարիք ունի: Որոշ դպրոցների համար դա կարող է ներառել Աշակերտի Առաջադիմության Եզակի Ծրագրի վերանայում աշակերտի և դպրոցի կարիքների լավագույնս հասցեագրման համար: Այլ դպրոցներ կարող են ցանկանալ դիտարկել տարբեր այլընտրանքային դպրոցների բարեփոխման մոդելները, որոնք նախաձեռնվել են ԼԱՄՈՒ կողմից, որտեղ ուսուցիչները, ծնողները, կառավարիչները և աշակերտները դառնում են դպրոցի փոխման իրական գործընկերներ:

Այս գրքույկը նկարագրում է ԼԱՄՈՒ լավագույն դպրոցներից մի քանիսի վերափոխման նախաձեռնությունները, որոնք ներկայումս մատչելի են դպրոցներին.

- ԸՆԴԱՐՁԱԿ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼ
- iDESIGN ԴՊՐՈՑՆԵՐ
- ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ
- ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՐՏՈՆԱԳՐԵՐ



ԼԱՄՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵՔ
www.ulta.ne\reforms
ԿԱՄ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 213-487-5560

## ԸԴԿՄ (ESBMM)

ԸԿԴՄ, կամ Ընդարձակ Դպրոցական Կառավարման Մոդելը հավանաբար դպրոցի կողմից իր ուսումնական ծրագրի վերահսկման ամենաhեշտ ձևն է: ԸԿԴՄ ձգտում է նպաստել աշխատակիցների գործառույթների բարելավմանը, բյուջեի կառավարմանը, ծնողների ներգրավվմանը և դասաժամերի պլանավորմանը:

ԸԿԴՄ դպրոցի նպատակներն են.

- Տեղական դպրոցների ֆինանսական ֆոնդի աճ հիմնվելով Նահանգային ԱԱԱ (State ADA) և ըստ կատեգորիաների ֆինանսավորման վրա
- Իր ֆինանսական միջոցների բացարձակ վերահսկում
- Վարչական, վկայագրված և դասակարգված աշխատակիցների աշխատանքի ընդունման վերահսկում, առանց պարտադրված աշխատանքի ընդունման
- Ուսումնական ծրագրի բացարձակ վերահսկում
- Մասնագիտական զարգացման բացարձակ վերահսկում
- Դասաժամերի գրաֆիկի բացարձակ վերահսկում

*Ներկա հաջողված ԸԿԴՄ օրինակներ. Վուդլանդ Հիլզ Ակադեմիա*





## iDesign ԴՊՐՈՑՆԵՐ

iDesign դպրոցները ունեն առավելագույնս ազատություն և ավտոնոմիա, աշակերտների և պատասխանատու են առաջադիմությունը բարելավման համար: iDesign դպրոցները ունեն բյուջեի, ուսումնական ծրագրի, դասացուցակի և կրթական ծրագրի այլ ասպեկտների տեղական վերահսկում:

iDesign դպրոցների մեծ մասը գործում են ցանցային գործընկերների և ԼԱՄՈՒ միջև iDesign բաժնի միջոցով կնքված եռամյա պայմանագրերի (ընդհանուր համաձայնագրերի) հիման վրա:

iDesign դպրոցները չեն կառավարվում տեղական շրջանների կողմից, սակայն կարող են ծառայությունների մատուցման պայմանագիր կնքել տեղական շրջանի հետ:

*Ներկա հաջողված I-DESIGN օրինակներ. Ձեռքի արվեստների դպրոց և Քրենշոու դպրոց*




